ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորանքի խոսքը՝
Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ

Սիրելի՛ երեխաներ, սրտանց շնորհավորում եմ բոլորիդ՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ:

Ձեր մեջ են ամփոփված մեր հայրենիքի վաղվա օրը, մեր երազանքներն ու հավատը: Ձեր մաքրությունը, ժպիտներն ու անկեղծ հայացքները մեզ մշտապես ուժ ու եռանդ են տալիս՝ կառուցելու անվտանգ, զարգացող ու լուսավոր հայրենիք:

Յուրաքանչյուր երեխա կարիք ունի՝ մեծանալու սիրով լի միջավայրում, հոգատարության, կրթության ու արժեհամակարգային դաստիարակության ներքո: Մենք պարտավոր ենք ստեղծել բոլոր պայմանները, որպեսզի դուք լինեք առողջ, կրթված, պաշտպանված ու երջանիկ: Իսկ դա մեր համայնքում վերջին տարիներին շատ նկատելի է արդի չափորոշիչներին համապատասխան մանկապարտեզների կառուցմամբ կամ հիմնանորոգմամբ:

Որքան ամուր ու խաղաղ լինի մեր հայրենիքը, այնքան վստահ ու ապահով կլինեն մեր երեխաները: Թող երկինքը մի՛շտ խաղաղ ու կապույտ լինի, ունենանք ուժեղ ընտանիքներ և լուսավոր երեխաներ:

Դուք մեր ամենամեծ հարստությունն եք:

Լավագույն մաղթանքներով՝

ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար

Հովհաննես Հովեյան